# ԲՆԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

## ԾՆՈՂԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ:

Ծնողավարության մեջ արդյունավետ միջոցներից են բնական և տրամաբանական հետևանքները:

- Բնական են այն հետևանքները, որոնք ի հայտ են գալիս միանգամից, պլանավորված չեն: Օրինակ՝ երեխան մեկնում է ձեռքը տաք բաժակին, վառում ձեռքը և հասկանում, որ դա անել չի կարելի:
- Տրամաբանական են այն հետևանքերը, որոնք դրվում են որպես պայման ծնողի կողմից:
- Տրամաբանական հետևանքները երեխային ընտրության հնարավորություն են տալիս: Նա գիտակցում է, որ ընտրությունը, ուստի և պատասխանատվությունը իրենն է: Այս հետևանքները պետք է հստակ կապված լինեն երեխայի արարքի հետ:
- Տրամաբանական հետևանքները չեն կիրառվում մինչև երեք տարեկանը, դրանք անհասկանալի են երեխայի համար:
- Տրամաբանական հետևանքները պետք է լինեն՝ հարգալից, համապատասխան, իրատեսական:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության  և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: